ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/45-1

ք. Մեծամոր «13» հոկտեմբերի 2022թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՄ ԹՌԱՍԹ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արայիկ Ստեփանյանի, որը գործում է «ԱՐՄ ԹՌԱՍԹ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վերագնահատման ծառայությունների պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **6,900,000.00 (վեց միլիոն ինը հարյուր հազար)** ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ն (Կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող):

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Պատվիրատուն վճարումը կատարում է իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի

ժամկետով, իսկ չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է առանց որևէ իրավական պարտավորության:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտն Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ

նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Վաճառողը համաձայնագիրը կնքումև Գնորդին է ներկայացնում համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար-----------------Վահրամ Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐՄ ԹՌԱՍԹ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Եր. Քոչարի 19/50
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2051222063241001
ՀՎՀՀ 02852244

տնօրեն--------------------Արայիկ Ստեփանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«13 հոկտեմբեր» 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/45-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ծառայության						Մատուցման	
	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Ընհանուր գինը (ՀՀ դրամ)	Հասցեն	Ժամկետը
1	73432100/501	Վերագնահատման ծառայություններ	1. ՀՀ Մեծամորի համայնքապետարանի կողմից տրամադրված ցանկում (կից Հավելված 1.1) ներառված հիմնական միջոցների իրական արժեքի գնահատում՝ հիմնական միջոցի գտնվելու վայրում:Հիմնական միջոցի մասնագիտական զննում և անհրաժեշտության դեպքում ՝լուսանկարում (ավտոմեքենաների դեպքում՝ պարտադիր): Հիմնական միջոցների տրոհում և/կամ միավորում (անհրաժեշտության դեպքում): 2.Գնահատման անհրաժեշտ մեթոդների հիմնավորում և կիրառում: 3.Հիմնական միջոցի օգտակար ծառայության ժամկետի որոշում, օգտագործված մեթոդի մասին նշում,առկայության դեպքում հիմքերի կցում: 4. Հիմնական միջոցների պիտակավորում ա. հիմնական միջոցների պիտակների մշակում,տպագրում,նոր ձեռք բերված հիմնական միջոցների պիտակավորում. բ. պիտակի նկարագիր՝ Օրինակ . տեսակը -պոլիամիդե . գույնը-արծաթափայլ .պիտակների պարունակությունը-յուրաքանչյուր պիտակի վրա տպագրվում է կազմակերպության անվանումը,հիմնական միջոցի անվանումը,գույքահամարը: 5. Հաշվետվության,գնահատման ցուցակները տրամադրում թղթային և էլեկտրոնային տարբերակներով : Էլեկտրոնային տարբերակով ցուցակները տրամադրել ՀՀ հաշվապահական հաշվառման օրենսդրաիրավական դաշտի և ստանդարտների պահանջների համաձայն,որը հնարավոր կլինի ներմուծել հիմնական միջոցների բազա:Կազմել արդյունքների համեմատական տեղեկագիր և տրամադրել:	դրամ	1	6900000	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք	Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո **առավելագույնը 25 աշխատանքային օրվա ընթացքում:**
		ԸՆԴԱՄԵՆԸ				**6900000**		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար ------------- Վահրամ Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐՄ ԹՌԱՍԹ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Եր. Քոչարի 19/50
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2051222063241001
ՀՎՀՀ 02852244

տնօրեն ------------- Արայիկ Ստեփանյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1.1
« 13 » հոկտեմբեր 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀՇՁԲ-22/45-1 ծածկագրով պայմանագրի

ՑԱՆԿ

Վերագնահատման ենթակա ապրանքների

Հ/Հ	ՀՄ Անվանումը	Քանակը /հատ	Հ/Հ	ՀՄ Անվանումը	Քանակը /հատ	Հ/Հ	ՀՄ Անվանումը	Քանակը /հատ
1	Ուժեղացուցիչ	1	81	Ռադիոհանգույց	1	161	Երկաթյա գրադարակ	553
2	Հնչյունային կալոնկա	2	82	Բենզինային գերանդի	2	162	Աթոռ	1162
3	Բիլիարդ	1	83	Համակարգչային սրքեր	1	163	ն բազկաթոռ,աթոռ	2098
4	Էլեկտրական աղաց	1	84	Մոնիտոր	64	164	Կատալոգի արկղ	19
5	Ավտոցիստերն	1	85	Կառավարման վահանակ	7	165	Ձիրկիզվող պահարան .կասսա	39
6	Էլեկտրոջերմատաքացուցիչ	10	86	օդորակիչ	26	166	Երկաթյա պահարան	63
7	Պլիտա	5	87	Հոսանք գեներատոր	1	167	Գրքեր	166402
8	Մարտկոց	6	88	Ավտոբուս	1	168	Կրակմարիչ	53
9	Լյումինեսցետային լուսատուներ	36	89	Ավտոաշտարակ	1	169	Բառի սարքավորումների կոմպլեկտ	1
10	Տրակտոր	4	90	Տեսաձայնագրիչ	7	170	Կահույք	4
11	Կցասայլ	2	91	Կոշտ սկավառակ	9	171	Դաշնամուր	17
12	Ջրցան կցորդ	1	92	Տեսախցիկ	52	172	Նիստերի սեղան	3
13	Կարկտակայան	6	93	Կինոկամերա	1	173	Համակարգչային սեղան	36
14	Կաթսա BAXI	5	94	Կոմպլեկտ ուժեղացուցիչ	1	174	Սեղան դիմադիր	19
15	Գլխիկների հավաքածու	1	95	Սինթեզատոր	1	175	Գրասեղան	182
16	Գազ ավտոմեքենայի	1	96	Կինոպրոեկտոր	1	176	Գորգ	2
17	Սուլիչ	1	97	Միկրոֆոն	2	177	Գրապահարան	130
18	Երաժշտության գործիք	1	98	Օդափոխիչ	1	178	Բազմոց	19
19	Նասոս	3	99	Սերվեր	1	179	Հեռուստացույցի տակդիր	6
20	Փոխանցման տուփ	1	100	Ցանցային հեռախոս	2	180	Բազկաթոռ	30
21	Կամրջակ	1	101	Համակարգիչ	144	181	Նստարան	467
22	Արևային կայաններ	4	102	Հեռուստացույց	14	182	Սեղան աթոռ պլաստմասե	4
23	Դինամիկ	3	103	Սառնարան	19	183	Կավրալիտ	7
24	Անվտանգության համակարգ	1	104	Տպիչ	71	184	Սեղանի թենիս	7
25	Բալգարկա	1	105	Տեսանկարահանող համակարգ	6	185	2 և 3 քաշովի դարակներով մոդուլատոր համակարգիչների և տպիչների	5
26	Զոդման սարք	1	106	Մոդեմ	8	186	Սպասարկող աթոռ	2
27	Նվագարկիչ գեպաս	1	107	Էլ. էներգիայի հաշվիչ	11	187	Սպասասրահ	1
28	Բենզասղոց	1	108	Բենզինային խոտհնձիչ	9	188	Սալիկապատում	1
29	Կարգավորիչ	1	109	Շկաֆ Թիթեղյա	8	189	Պլաստմասե խմելաջրի խողովակ	2
30	Լեդ լուսատու	35	110	Երկաթյա Պատուհան	4	190	Խողովակաշար	1
31	Պալատյոր	2	111	Երկաթյա ճաղ	1	191	Ենթակայան	1

32	Ֆոտոապարատ	3	112	Հրշեջ վահան	1	192	Ավանի բարեկարգում		1
33	Թվային ապահովիչ	1	113	Դռան հովանոց	1	193	Նավթամթերքի լիցքավորման կետ		1
34	Ճնշման հաղորդիչ իր սարքավորումներով	1	114	Սեղան մանկական	15	194	Ջրավազան , լողավազան		3
35	Ջրաչափեր	482	115	Աթոռ մանկական	62	195	Դաշտամիջյան տնակ		3
36	Հնձիչ	1	116	Մահճակալ մանկական	26	196	Կշեռքի տնակ		1
37	բետոն խառնիչ	1	117	Նկարներ	45	197	Խաղահրապարակի սարքավորումներ		7
38	Գազ սեղանի	1	118	Տանձիկ	7	198	Տիպային խպաղահրապարակ		1
39	Շարժական փոցխ	1	119	Լապա	5	199	Լամինատե տնակներ		2
40	Սայլակ	1	120	Կրծքավանդակի պաշտպանիչ	2	200	Ոռոգման համակարգ		1
41	Խողովակ երկաթյա 159մ	1	121	Աթոռ սեղան կոմպլեկտ	1	201	Կանգառ		4
42	Գազի բալոն	1	122	Դուռ	1	202	Ցանկապատ		9
43	Խոտհնձիչ էլեկտրական	1	123	Մանկական սղարան	1	203	Ասֆալտ ճանապարհով		3
44	Սրսկիչ	1	124	Երկաթյա հենասյուն	23	204	Կաթսայատուն		1
45	Հեծանիվ	2	125	Մանկական ճոճանակ	1	205	Փողոցային լուսավորություն		36
46	Տուռնիկ	1	126	Գութան	1	206	Բեռնակշեռք		1
47	Կշեռք	1	127	Անկյուն ուգալոկ	2	207	Ջրամղիչ աշտարակ		4
48	Մալցման բուրգ	1	128	Տարեգիրք	2	208	Ոռոգման ներտնտեսային ցանց		18
49	Գանտել	9	129	Աստիճան	2	209	Արտեզյան ջրհոր		83
50	Բլոկ վերևից	1	130	Տրիմո	2	210	Կաթսա		1
51	Կարդիո սարք	1	131	Գզրոց	1	211	Գերեզմանոցի կառույց		2
52	Գիպեռ	1	132	Նկարների պատվանդան	1	212	Կոյուղագիծ		3
53	Վազքուղի	1	133	Աղբարկղ	4	213	Ցայտաղբյուր		3
54	Ժիմյոժա	1	134	Սեղան երկաթյա	1	214	Ճաղավանդակդեկոր		1
55	Ոտքի սարք	1	135	Քարտերի գրադարան	2	215	Նստարան դեկորատ		5
56	Բատուտ	1	136	քիվ մետաղյա	3	216	Տառեր մետաղյա		6
57	Գիր	4	137	Պահարան	28	217	Կամար դեկորատիվ		1
58	Սկամեյկա պռեսի համար	2	138	Բաշխիչ սարքավորում	1	218	Աղբաման դեկորատիվ		5
59	Մարզասարք մեջքը ուղղելու	1	139	Ամբիոն	5	219	Հենասյուն դեկորատիվ		12
60	Ծանրածող	2	140	Տատամի	1	220	Ջրամատակարարման ցանց		3
61	Սկաներ	3	141	Ստենկա	10	221	Զբոսայգի 1800քմ		1
62	Պատճենահանող սարք	7	142	Շքամուտքի կահույք	4	222	Փողոց 15կմ		2
63	Անխափանման սնուցման սարք	43	143	Կախիչ	22	223	Ներքին էլ ցանց		12
64	Ցանցային կոնցենտրատոր	2	144	Փափուկ կահույք	7	224	Կիսախողովակների ներքին ցանց		4
65	Հարթաչափ	1	145	Ջրի բաք	16	225	Խառը կառուցապատում		1
66	Հեռախոս	9	146	Ցուցափեղկ	18	226	Ջրմուղ		1
67	Գրամեքենա	5	147	Գրքերի պոլկաներ	260	227	Այգի		1
68	Լուստրա	5	148	Ռամպա	1	228	Ավտոհավաքակայան պահակատուն		1
69	Ավտոմեքենա	20	149	Շիրմա	1	229	Շուկա բացօթյա և պահեստ		1
70	Շչակ	8	150	Խոհանոցի Կահույք	3	230	Հանգստի գոտի		1
71	Բազմաֆունկցիոնալ սարք	5	151	Սեղան	400	231	Հուշակոթող		14
72	Երաժշտական կենտրոն	3	152	Աթոռ ԻԶՕ	6	232	Խորքային հոր		83
73	Ջրի սառեցման սարք	8	153	Դուռ երկաթյա	5	233	Սելավատար կամուրջ		22
74	Եռաֆազ հաշվիչ	1	154	Համակարգչի աթոռ	8	234	Պոմպ		36
75	Գազի վառարան	7	155	Աղբաման	36	235	Գազի գիծ		10
76	Փոշեկուլ	5	156	Մետաղապլաստիկ դուռ	1	236	Ջրի գիծ		30
77	ՀՀ դրոշ,զինանշան	26	157	Լազերային մետր	1	237	Մսուր մուրադի տեղ		1

78	Արհեստական եղևնի խաղալիքներով	4	**158**	Էտաժերկա	24	**238**	Զուգարան		2
79	Տրանսֆորմատոր	16	**159**	Եվրոպատուհան	6	**239**	Հրապարակ		3
80	Գազի հաշվիչ	3	**160**	Դուռ	2	**240**	Տումբա		5

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար----------Վահրամ Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐՄ ԹՌԱՍԹ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Եր. Քոչարի 19/50
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2051222063241001
ՀՎՀՀ 02852244

տնօրեն----------Արայիկ Գևորգյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
« 13 » հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/45-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/45 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և վճարման ժամանակացույցը լրացվելու և կնքվելու է Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվելու են Մեծամորի համայնքապետարանի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարման ենթակա գումարները ներկայացվելու են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Մեծամորի համայնքապետարան	«ԱՐՄ ԹՌԱՍԹ» ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1	ՀՀ, ք. Երևան, Եր. Քոչարի 19/50
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900332239061	Հ/Հ 2051222063241001
ՀՎՀՀ 04440608	ՀՎՀՀ 02852244
համայնքի ղեկավար------------- Վահրամ Խաչատրյան (ստորագրություն) Կ.Տ.	տնօրեն------------- Կրպիկ Ստեփանյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 3
« 13 » հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/45-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 13 »հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀՇՁԲ-22/45-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

13.10.2022 թվականին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/45-1 գնման պայմանագրի

ք. Մեծամոր «_____» _____ 2022թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՄ ԹՌԱՍԹ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արայիկ Ստեփանյանի, որը գործում է «ԱՐՄ ԹՌԱՍԹ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 13.10.2022թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/45-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5, 7.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ծառայության ձեռքբերման համար հատկացված 6,900,000.00 (վեց միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ն (Կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող), շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրի Հավելված N 1-ով ներկայացված ծառայության մատուցման ժամկետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ՝ *«Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո առավելագույնը 25 աշխատանքային օրվա ընթացքում»*:

2. Պայմանագրի Հավելված N 2-ով ներկայացված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը փոփոխել և հաստատել ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար----------Վահրամ Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐՄ ԹՌԱՍԹ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Եր. Քոչարի 19/50
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2051222063241001
ՀՎՀՀ 02852244

տնօրեն----------Արայիկ Ստեփանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«13» հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/45-1 ծածկագրով պայմանագրի
«____» _____ 2022թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	73432100/501	Վերագնահատման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	6900000	6900000	6900000	6900000

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական
կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար----------Վահրամ Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐՄ ԹՌԱՍԹ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Եր. Քոչարի 19/50
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2051222063241001
ՀՎՀՀ 02852244

տնօրեն----------Վարդան Մանասյան
(ստորագրություն)